

ՏԵՂԵԿԱԼՔ

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2009 թվականի գերակա խնդիրների լուծման միջոցառումների իրականացման ընթացքի մասին

«Հանրակրթական ոլորտի բարեփոխումներ» գերակա խնդրի լուծմանն ուղղված՝ հանրակրթական հաստատություններում ուսուցման նոր տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման ընդլայնման ուղղությամբ 2009 թվականի չորրորդ եռամսյակում Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնում (ԿՏԱԿ) կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Գումարվել են ԿՏԱԿ-ի խորհրդի հերթական նիստերը (30.10.2009թ. և 25.12.2009թ.), որի ընթացքում քննարկվել ու հաստատվել են կազմակերպության գործունեությանը վերաբերող տարբեր փաստաթղթեր:
2. Իրականացվել են 644 դպրոցներ ընդգրկող Հայաստանի դպրոցների ինտերնետային ցանցի (ՀԴԻՑ) կառավարման ու պահպանման աշխատանքները.
 - իրագործվել է ՀԴԻՑ-ի աշխատանքի ամենօրյա հսկողությունը, ապահովվել ՀԴԻՑ-ի դպրոցների հետ օպերատիվ երկկողմանի աշխատանքային կապը,
 - կատարվել է ՀԴԻՑ-ի աշխատանքի մասին ամսական հաշվետվությունների քննարկումն ու վերլուծությունը,
 - իրականացվել է ՀԴԻՑ-ի ընթացիկ աշխատանքային վիճակը բնութագրող դինամիկ շտեմարանի շահագործումը,
 - իրականացվել է ՀԴԻՑ-ի դպրոցներում վնասված ցանցային սարքավորումների հաշվառումը, չաշխատող սարքավորումները փոխարինվել են նորերով,
 - ամփոփվել է ՀԴԻՑ-ի պահպանման համար անհրաժեշտ սարքավորումների ձեռքբերման մրցույթը,
 - նախապատրաստվել, հայտարարվել և ամփոփվել է ՀԴԻՑ-ի 2010 թվականի սպասարկման ծառայության գնման բաց մրցույթը, հաղթող կազմակերպության հետ կնքվել է պայմանագիր:
3. Իրականացվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի (ՇԻՀԿ) շահագործումը Տավուշի մարզի Կիրանց և Լճկաձոր, Կոտայքի մարզի Բուժական և Հատիս, Արագածոտնի մարզի Ափնա համայնքներում: ՇԻՀԿ-ի գործունեությունը

տեղում ստուգելու և աշխատանքը վերահսկելու նպատակով կատարվել են պարբերական այցելություններ: Նշված ժամանակահատվածում ՇԻՅԿ-ի դասընթացներին մասնակցել են 146 աշակերտներ, վերապատրաստվել՝ 56 ուսուցիչներ:

Նախապատրաստվել և հայտարարվել է Շարժական ինտերնետային-համակարգչային կայանի 2010 թվականի շահագործման ծառայության գնման բաց մրցույթը:

4. Իրականացվել են ՀԴԻՑ-ում նոր ընդգրկված 320 դպրոցների ներքին ցանցերն ու համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների և ինֆորմատիկայի ուսուցիչների վերապատրաստումները:
5. Իրականացվել են «Համացանցի օգտագործման ուղեցույց» ուսումնասօժանդակ ձեռնարկի և կից էլեկտրոնային նյութի (լազերային սկավառակի) ստեղծման, հրատարակման աշխատանքները՝ ձեռնարկի երկուական օրինակներ Հայաստանի բոլոր դպրոցներին հանձնելու նպատակով:
6. Իրականացվել է «Կրթական համալիր էջ» ինտերնետային կրթական պորտալի (www.armedu.am) շահագործումը.
 - ապահովվել է պորտալի «Տեղեկատվություն» բաժնի գործունեությունը՝ պարբերաբար թարմացվել են գործող ենթաբաժինները,
 - լրացվել և հարստացվել է «Կրթական նյութեր» բաժնի էջերի բովանդակությունը, «Պաշարների կատալոգում» ստեղծվել են նոր ենթաբաժիններ, հարստացվել են «Օգտակար հղումներ» ու «Հանրակրթական դպրոց» ենթաբաժինները, տեղադրվել են հանրակրթական դպրոցի տարբեր դասարանների և ուսումնական առարկաների ընթացիկ գնահատման թեստերի ժողովածուներ,
 - պորտալի կառուցվածքում ստեղծվել է «Սփյուռք» ենթակայքը, գործարկվել են ենթակայքի «Լուրեր», «Ուսուցիչների վերապատրաստումներ», «Ուսումնական նյութեր, գրքեր», «Կրթական խորհրդածողովներ», «Սփյուռքի կրթօջախներ», «Ձեկույցներ, հաշվետվություններ», «Օլիմպիադաներ, մրցույթներ, նոր նախաձեռնություններ» էջերը,
 - կազմակերպվել է «Ֆորումներ», «Խորհրդատվություն» և «Վիրտուալ համայնքներ» բաժինների բնականոն աշխատանքը, կրթական տարբեր կարևոր հարցերի շուրջ ծավալված քննարկումների (մասնավորապես՝ դպրոցական դասագրքերի, դպրոցում ինֆորմատիկա առարկայի դրվածքի,

դպրոցների համակարգչային ուսումնական կենտրոնները սպասարկող մասնագետների դերի ու պարտականությունների, նրանց վերապատրաստումների ու վճարման կարգի վերաբերյալ) մասին գրություններ (ֆորումների էջերի ինտերնետային հասցեները, գրառումների և այցելությունների քանակական ցուցանիշները) են ուղարկվել ՀՀ կրթության և գիտության փոխնախարարին և Կրթության ազգային ինստիտուտի տնօրենին,

- առաջադրվել են կրթական ոլորտին առնչվող նոր հարցեր և դրանց շուրջ կազմակերպվել քվեարկություններ «Չարցումներ և քվեարկություն» բաժնում,
- իրականացվել է ՀՀ կրթության և գիտության նախարարության (ԿԳՆ) ստորաբաժանումներից ու տարբեր կրթական հաստատություններից, հասարակական կազմակերպություններից ստացված տեղեկատվական նյութերի և փաստաթղթերի տեղադրումը պորտալի համապատասխան բաժիններում,
- շահագործվել է պորտալի անգլերեն բաժինը՝ «Տեղեկատվություն» բաժնում ավելացվել են կրթական կազմակերպությունների նոր էջեր, թարմացվել են «Նորություններ» և «Հայտարարություններ» ենթաբաժինները, «Կրթական նյութեր» բաժնում հարստացվել են «Օգտակար հղումներ» ու «Պաշարների կատալոգ» ենթաբաժինները:

7. Կազմակերպվել են առցանց մրցույթներ ՀԴԻՑ-ի և «Կրթական համալիր էջ» պորտալի միաջավայում.

- ամփոփվել են «Դպրոցական ակնթարթ» խորագրով լուսանկարների մրցույթի արդյունքները, նախապատրաստվել, հայտարարվել և ամփոփվել են «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի հռչակագրի ընդունման 20 ամյակին նվիրված վիկտորինայի երկու փուլերը, կազմակերպվել է մրցույթների հաղթողներին մրցանակների և պատվոգրերի հանձնման արարողությունը,
- ամփոփվել են Երևանի Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի «Մաթեմատիկայի ինտերնետային ամսագիր» պարբերականի մաթեմատիկայի առցանց օլիմպիադայի երեք փուլերի արդյունքները, կազմակերպվել է հաղթողներին պատվոգրերի և խորհրդանշական նվերների, իսկ բոլոր մասնակիցներին՝ խրախուսական նվերների հանձնման հանդիսավոր միջոցառումը:

8. Իրականացվել է ԿՏԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքի (www.ktak.am) և ԿՏԱԿ-ի էլեկտրոնային կառավարման համակարգի շահագործումը:

9. Իրականացվել են աշխատանքներ Հանրակրթության կառավարման տեղեկատվական համակարգի գործունեության և զարգացման ուղղությամբ.

- կազմակերպվել է հանրակրթական ուսումնական հաստատությունների ամփոփ վիճակագրական տվյալների հիման վրա կազմված «Հանրակրթությունը Հայաստանում 2008-2009 ուսումնական տարում» վիճակագրական տեղեկագրի բաշխումը կրթական կազմակերպություններին, ՀՀ ԿԳՆ ստորաբաժանումներին, մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի կրթության վարչություններին,
- կազմակերպվել է 2009-2010 ուսումնական տարվա ձև թիվ 1- հանրակրթություն «Հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեության մասին» վարչական վիճակագրական հաշվետվության բաշխումը Հայաստանի բոլոր հանրակրթական ուսումնական հաստատություններին,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի դրույթներով պայմանավորված կատարվել են փոփոխություններ Հանրակրթության կառավարման տեղեկատվական համակարգի ծրագրային փաթեթում, իրականացվել են դպրոցների վիճակագրական տվյալների հավաքագրման և մուտքագրման աշխատանքները,
- պարբերաբար, ըստ պահանջի, ՀՀ ԿԳՆ, Ազգային վիճակագրության ծառայություն, «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ, Համաաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակ է ներկայացվել տարբեր վիճակագրական տվյալներ պարունակող տեղեկատվություն:

10. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) հայաստանյան գրասենյակի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ձևավորված աշխատանքային խումբը մշակել և պատվիրատուին է ներկայացրել «Նախադպրոցական կրթության տեղեկատվական համակարգի տեխնիկական առաջադրանքը»:

Աշխատանքային խումբը տեղեկատվական համակարգի ստեղծմանն առնչվող հարցերը քննարկելու նպատակով Լոռու մարզում մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության աշխատակիցների, մարզի նախադպրոցական հաստատությունների տնօրենների և գլխավոր հաշվապահների մասնակցությամբ կազմակերպվել է սեմինար-խորհրդակցություն:

11. Կազմակերպվել են ՀՀ ԿԳ նախարարի 24.08.2009թ. հ.756-Ա/Ք «Համակարգչային գրագիտության ուսուցման ծրագրի նախագծի փորձնական փուլի կատարումն ու

«ՏՀՏ-ն դպրոցում» ծրագրի ուսումնասիրությունն ապահովող աշխատանքային խումբ ստեղծելու մասին» հրամանով նախատեսված աշխատանքները.

- կազմակերպվել է Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի ստեղծած «Ուսում 1» համակարգի տեղադրումը փորձնական ներդրման համար ընտրված դպրոցներում, կատարվել են հարցումներ ներդրման ընթացքի մասին,
- «Միկրոաշխարհներ LՈԳՈ»-ի (Microworlds LOGO) էլեկտրոնային ուսուցողական միջավայրի կիրառման արդյունավետությունը և դպրոցական ծրագրում այն ընդգրկելու անհրաժեշտությունն ուսումնասիրելու նպատակով ամփոփվել են համապատասխան փորձ ունեցող դպրոցների լրացրած հարցաթերթիկների արդյունքները, փորձնական ներդրման համար ընտրված դպրոցների ուսուցիչների համար «Քվանտ» վարժարանում կազմակերպվել են կարճատև դասընթացներ և ավարտական աշխատանքների ցուցադրություններ,
- ԿԳ նախարարին առաջարկ է ներկայացվել ՀՀ կառավարության 2010թ. գործունեության ծրագրի նախագծում «Հայաստանի հանրակրթության ոլորտում համակարգչային գրագիտության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծն ընդգրկելու վերաբերյալ:

12. Կրթության ոլորտում ՏՀՏ բնագավառի ծրագրերի համակարգման, տեղական և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության նպատակով ԿՏԱԿ-ի աշխատակիցները մասնակցել են ՏՀՏ ոլորտին առնչվող միջոցառումներին, մասնավորապես՝

- մասնակցություն Հարավային Կորեայի մայրաքաղաք Սեուլում «ՏՀՏ-ն կրթության ոլորտում» եռօրյա միջազգային համաժողովին,
- մասնակցություն ՀՀ կրթության և գիտության նախարարության կազմակերպած «Կրթություն – զարգացում համագործակցությամբ» երկօրյա խորհրդաժողովին, «ՏՀՏ կիրառությունը կրթության ոլորտում. իրականացվող ծրագրեր, առաջնահերթ խնդիրներ, համագործակցության առաջարկներ» թեմայով երկու զեկուցումներ,
- մասնակցություն Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» վարկային առաջին ծրագրի ամփոփմանն ու երկրորդ ծրագրի մեկնարկին նվիրված երկօրյա համաժողովին, «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի գործունեությունը» թեմայով զեկուցում,

- մասնակցություն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն «Մրցունակ մասնավոր հատված Չայաստանում» (CAPS) ծրագրի «Չայաստանի տեղեկատվական տեխնոլոգիաների մրցունակության» երրորդ ամենամյա համաժողովին, «ՏՉՏ ներդրումը դպրոցում» թեմայով զեկուցում,
- աջակցություն ու մասնակցություն ՀՀ ԿԳՆ և «Մայքրոսոֆթ» ընկերության միջև ստորագրված «Գործընկերներ ուսման ոլորտում» փոխհամագործակցության հուշագրի շրջանակներում անցկացված «Նորարար ուսուցիչների հայաստանյան առաջին ֆորումի» և «Վիրտուալ շրջայց դասասենյակից» մրցույթի կազմակերպչական աշխատանքներին,
- մասնակցություն InWent միջազգային կարողությունների կառուցման կազմակերպության «Ինստիտուցիոնալ կառուցում և մարդկային ռեսուրսների զարգացում էլեկտրոնային ուսուցման (e-Learning) ոլորտում» ծրագրի դասընթացին (ՏՉՏ բովանդակության բաժնի մասնագետ Մ.Դումիկյանը ստացել է վկայագիր՝ ծրագրի բոլոր բաղադրիչների ուղղությամբ ձեռքբերած գիտելիքների համար),
- մասնակցություն Չայկական վիրտուալ համալսարանի (Armenian virtual college) ստեղծողների և շահագործողների հետ հանդիպում-քննարկմանը,
- մասնակցություն «Այբ» կրթական հիմնադրամի կազմակերպած «Չայկական դպրոց» թեմայով կլոր սեղանին,
- մասնակցություն Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության կազմակերպած «Ռոբոտատեխնիկայի զարգացումը կրթական հաստատություններում» թեմայով հանդիպում-քննարկմանը,
- մասնակցություն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի կազմակերպած «Ստվեր» դպրոցական ֆիլմերի և լուսանկարների հանրապետական փառատոնի ամփոփիչ միջոցառմանը,
- մասնակցություն «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում իրականացվող մանկավարժական ծրագրերի ամենամյա 4-րդ բաց փորձաքննությանը: